Doi: 10.56737/2953-7843-2025.10-121

ՀԱՅՐ ԱՍՈՂԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՃԱՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ[1]

Կոգեւոր դաստիրակչությունը մշտապես եղել է Հայ Եկեղեցու սրբազան առաքելության առանցքային բաղադրիչներից մեկը։ Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի նախաձեռնությամբ «Տիգրան Մեծ» հրատարակչությունը լույս է ընծայել Ասողիկ աբեղա Կարապետյանի «Սուրբ էջմիածին. Քրիստոնեական աշխարհի առաջին Տաճարը» ծանրակշիռ աշխատությունը, որը նվիրված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տաճարի վերանորոգությանն ու վերաօծմանը։ Պատկերագիրքը հրատարակվել է Երեւանում հայերեն, անգլերեն եւ ռուսերեն լեզվով։ Այն կազմում է 287 էջ եւ ընդգրկում ավելի քան 300 բարձրորակ պատկեր։

Ասողիկ աբեղա Կարապետյանը, հավատարիմ մնալով իր առաքելությանը եւ լինելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների եւ արխիվի տնօրեն, թանգարաններում ամբարված մշակութային ժառանգությունը հանրությանը ներկայացնելու նպատակով հաճախ հանդես է գալիս բազմաբնույթ նախաձեռնություններով, որոնց գալիս է լրացնելու պարբերաբար հրատարակվող աշխատությունները։ Ասվածի վառ վկայությունն է 2023 թ. հրատարակված «Հնամյա Վեհարանը» պատկերագիրքը, որը նվիրված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կարեւորագույն կառույցներից մեկին՝ Ամենայն Հայոց Հայրապետների նստավայր ու կեցավայր Հին Վեհարանին։ Ինչպես «Հնամյա Վեհարան» պատկերագրքում, այնպես էլ «Սուրբ Էջմիածին. Քրիստոնեական աշխարհի առաջին Տաճա-

---

[1]* *Ստացվել է՝ 21.8.2025, գրախոսվել է՝ 21.9.2025։ Էլ. հասցե՝* yvettetaj@gmail.com:

ը» պատկերագրքում հեղինակն առաջնորդվել է նույն սկզբունքով. մեկ աշխատության շրջանակում տալ հնարավորինս ամբողջական պատկեր կառույցի պատմական անցյալի եւ ներկայի մասին՝ շեշտելով այս կարեւորագույն կառույցների բացառիկ դերը հայոց հավատի հիմքում[2]։

Սույն պատկերագրքի լույսընծայումը սպասված իրադարձություն է, քանզի թեման խիստ արդիական է։ Դրա մասին են փաստում եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տաճարի՝ վերջին տարիներին նախաձեռնած մեծամասշտաբ նորոգության աշխատանքները ու այդ առիթով ստեղծված մեծ հետաքրքրությունը, եւ նման բովանդակությամբ աշխատանքների սակավությունը։ Ուստի, պատկերագրքի ստեղծման հիմքում ընկած երկու թեմայի լայնամասշտաբ լինելը ակնկալում էր ընդարձակ եւ պատասխանատու մոտեցում, որը նախորդ աշխատության օրինակով կատարելապես իրագործվել է։

Պետք է արձանագրել մի կարեւոր փաստ, որ գրքի խմբագրությունն իրականացրել է Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, ով կյանքի տարբեր փուլերում ականատես լինելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությանը եւ պատմական իրադարձություններին՝ լավագույնս հանձն կառներ այս աշխատանքը։ Խմբագրի ընտրությունը կարեւոր հանգամանք է, որ շեշտում է հեղինակի լուրջ վերաբերմունքը այս պատասխանատու գործն իրականացնելիս։

Պատկերագիրքը թերթելիս ակնհայտ է դառնում, որ հեղինակը հստակորեն պատկերացնում է իր առջեւ դրված նպատակները եւ խնդիրները, որոնք արտահայտվում են կառուցվածքային հստակ ձեւակերպման միջոցով։ Պատկերագրքի առաջին էջերին հեղինակը համակողմանի տեղեկություններ է փոխանցում քննվող նյութի վերաբերյալ, պատմական սեղմ ակնարկով եւ համապարփակ մեջբերումներով մեկնում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տաճարի վերանորոգության հանգամանքները, որից էլ նկատելի է հետազոտողի քաջատեղյակ լինելը եւ խորին իմացությունը։

---

[2] *«Հնամյա Վեհարան» պատկերագրքում ընդգրկված պատկերների շնորհիվ կարդացողը լիարժեք պատկերացում է ստանում Հին Վեհարանի՝ անցյալում եւ ներկայում ունեցած դերակատարության մասին։ Հանգամանորեն ներկայացված են Ծաղկյա գահասրահը եւ յուրաքանչյուր սրահի՝ ներքին հարդարանքը, ծիսական առարկաները եւ նվիրատվությունները։ Ավելի մանրամասն տե՛ս* Տ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, *Հնամյա Վեհարան, Սուրբ Էջմիածին, Երեւան, 2023, 276 էջ։*

Հեղինակը իր առջեւ դրել է նպատակ՝ հնարավորինս ամբողջությամբ ներկայացնել Մայր Տաճարը՝ արտահայտված եւ ձեռագիր մատյաններում, եւ հնատիպ գրքերում, եւ արխիվային փաստաթղթերում, եւ լուսանկարներում, եւ ծիսական առարկաներում։

Պատկերաշարում յուրաքանչյուր միավոր-ստեղծագործության ընտրությունն ունի իր կարեւորությունը՝ իր անփոխարինելի տեղը եւ դերը, որն էլ ապահովում է թեմայի ամբողջական ըմբռնմանը։

Ակնհայտ է, որ կազմողը երկարատեւ եւ քրտնաջան ջանքեր է ներդրել քննարկվող նյութերը հավաքելու, մեկտեղելու, ըստ ամենայնի խմբավորելու եւ դասակարգելու համար։ Մեկը մյուսին հաջորդող նուրբ անցումների շնորհիվ հեղինակին հաջողվել է ընթերցողի ուշադրությունը կլանել, հետաքրքրություն առաջացնել եւ ուղեկցել մինչեւ պատկերագրքի տրամաբանական ավարտը։ Մեկտեղված նյութերի շնորհիվ ընթերցողը կարող է լիարժեք պատկերացում կազմել տարբեր ժամանակներում Մայր Տաճարի արտաքին եւ ներքին էության ու տեսքի մասին։

Պատկերագրքում բծախնդրորեն ներկայացված են թեմային առնչվող ինչպես մեզանում տարածում գտած եւ հրատարակված աշխատանքները, այնպես էլ հետեւողականորեն համալրվել են մեծաքանակ նորահայտ նյութերով։

Տրամաբանական է, որ Մայր Տաճարի վերականգնման փուլերի լուսաբանման հիմքում պետք է ընկած լինեին լուսանկարները։ Դրանք ներկայացնում են Մայր Տաճարի ներքին եւ արտաքին հարդարանքը՝ ճարտարապետության, վիմագիր արձանագրությունների, Հովնաթանյան տոհմի կողմից արված որմնանկարների[3] տեսանկյունից։ Դրան հասնելու համար հեղինակը մեկտեղել է արխիվային լուսանկարները,

---

[3] Մայր տաճարի որմնանկարներին նվիրվել են բազմաթիվ աշխատություններ։ Մասնագետներից առաջինը հայ գրականագետ, արվեստաբան Գարեգին Լեւոնյանն էր, որ այդ որմնապատկերները վերագրեց Նաղաշ Հովնաթանին։ Ենթադրաբար Նաղաշ Հովնաթանի ստեղծած որմնանկարներն արվել են 1712–1721 թթ.։ Նաղաշ Հովնաթանի մասին ավելին տես Ա. Զ ՈՊԱՆՅԱՆ, *Նաղաշ Հովնաթան աշուղը եւ Հովնաթան Հովնաթանյան նկարիչը, Փարիզ, 1910,* Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ, *Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը ԺԷ.–ԺԸ. դարերում, Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հատոր Բ, Երեւան, 1987, էջ 279–280,* Ա. ԱՂԱՍՅԱՆ, Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ, Վ. ՂԱԶԱՐՅԱՆ, *Հայ արվեստի պատմություն, Երեւան, 2009, էջ 236։ Սույն պատկերագրքում ընդգրկված որմնանկարների լուսանկարները միաժամանակ կարող են ուսումնասիրության հիմք դառնալ Մայր Տաճարի նկարազարդողներ Հովնաթանյան տոհմի ներկայացուցիչների գործունեության նորովի մեկնաբանման համար։*

որոնք արվել էին 20-րդ դարում։ Այդ նույն ժամանակներում էր, որ աշխարհում օրեցօր ավելանում էին համաշխարհային լուսանկարչության պատմության կերտման գործում իրենց կարեւոր խոսքն ասող հայազգի եւ օտար լուսանկարիչների թիվը։ Լուսանկարչական ժառանգությունն այս առումով շատ չէ, եղածներն էլ ժամանակի ընթացքում կրկնվել են եւ հրատարակվել քիչ քանակով։ Սույն աշխատության շրջանակում թեմայի հետ անմիջական կապ ունեցող եւ գիտական շրջանառությունից դուրս մնացած լուսանկարներին անդրադառնալով՝ հեղինակին հաջողվել է նոր լույս սփռել եւ նորովի ներկայացնել ողջ հայության հոգեւոր կենտրոն Մայր Տաճարին նվիրված աշխատանքները։ Լուսանկարների կիրառումը չի եղել ուղղակի կերպով՝ որպես առանձին բաժին, այլ հանդես է եկել պատկերագրքի մի շարք էջերում՝ ապահովելով տարբեր ստեղծագործությունների ամբողջական պատկերի փոխանցմանը։ Պատմական իրադարձությունները վկայող աղբյուրներից հավաքված լուսանկարները հանդես են գալիս որպես փաստաթուղթ եւ հղում իրականությանը. լուսանկարները հանդիսանում են որպես մեր պատմության վավերագրման փաստացի վկայություն, որոնց շնորհիվ ամրապնդվում է հավատը առ Աստված եւ ստեղծում ամբողջական պատկեր՝ ընթերցողին ծանոթացնելով Սուրբ Էջմիածնի քրիստոնեական աշխարհի առաջին Տաճարի հարատեւմանն ու հոգեւոր հարստությանը։

Թվում է, թե Սուրբ Էջմիածնի Մայր տաճարը իր վեհաշուք արտաքինով տեսանելի է բոլորին այնպես, ինչպես իրականում է, սակայն այս պատկերագրքում ընդգրկված նկարները վկայությունն են այն բանի, որ յուրաքանչյուր ուխտավոր անհատ՝ անկախ իր ազգային պատկանելությունից, Մայր Տաճարը բացահայտում է իր հոգուն հարազատ դիտանկյունից՝ մերթ իրատեսական՝ լուսանկարչական սարքին բնորոշ ճշգրտությամբ, մերթ՝ խորհրդավոր ու տիեզերական։

Աշխատության կարեւոր պատգամների առանցքում Մայր Տաճարի վերականգնման ընթացքի լուսաբանումն է։

Ընթերցողը լիարժեք պատկերացում է ստանում տարբեր ժամանակներում Մայր Տաճարի ներքին եւ արտաքին հարդարանքի մասին՝ այն է մինչ վերականգնումը եւ վերականգնումից հետո վերածնված տեսքով[4]։

---

[4] Պատկերագրքում ընդգրկված՝ Մայր Տաճարի վերականգնումից առաջ եւ հետո արված լուսանկարները որպես ուսումնասիրության նյութ կարող են ծառայել Է՛ճարտարապետնե-

Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհիվ նոր շունչ ստացած Մայր Տաճարը շարունակելու է իր առաքելությունը հայ ժողովրդի կյանքում՝ պահպանելով մեր ժողովրդի հոգեւոր դիմագիծը։ Հայր Ասողիկ Կարապետյանի լուսանկարների ընտրանին այս իմաստով եւս խորհրդանշական է։ Լուսանկարները գալիս են ապացուցելու, որ Վեհափառ Հայրապետը ամենայն պատասխանատվությամբ է հետեւել վերականգնման աշխատանքների ընթացքին եւ իր անմիջական ներկայությամբ, հետեւողականությամբ եւ հավատքի հանդեպ մոտեցմամբ նույնն է՝ մշտարթուն ու անկոտրում։

Թեմայի իմացությունը հեղինակին թույլ է տվել բազմաժանր նյութերը այնպիսի հաջորդականությամբ մատուցել, որ ոչ միայն չծանրաբեռնի ընթերցողին, այլ իրենց բացառիկ բովանդակությամբ լրացնի ու ամբողջականացնի եղածը։

Արժեքավոր են հատկապես հիմնովին վերականգնման արդյունքում բացահայտված նոր շերտերի ներկայացումը[5]։ Վերջիններս կարեւորագույն փաստեր են եւ աստվածաբանների, եւ պատմաբանների, եւ արվեստաբանների ուսումնասիրությունների համար։ Այս ամենին նպաստել է զուգահեռ ներկայացված մատչելի եւ հիմնավոր բացատրագրերը։

Պատկերագրքում ներկայացված նյութերը հավաքված են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններից, Արխիվից, ինչպես նաեւ բազմաթիվ այլ թանգարաններից ու հավաքածուներից։

Սույն աշխատությունը կարող էր ավելի ուղղորդող լինել տարբեր բնագավառների հետազոտողների եւ գիտնականների համար, եթե ներկայացված բացատրագրերում նշվեր տվյալ առարկայի պահպանման

րի, եւ հնագետների, եւ որմնանկարներ ուսումնասիրող մասնագետների համար։ Օրինակ՝ միայն հայկական եկեղեցական բեմառէջքները կամ Մայր Տաճարի բեմառէջքը ուսումնասիրող մասնագետները կարող են պատկերագրքում ընդգրկված լուսանկարները ծառայեցնել իրենց ուսումնասիրությունների համար։

[5] Նկարիչ-վերականգնող Աշխեն Պապոյանը նշում է, որ էջմիածնի որմնանկարները նորոգելիս հաճախ է պատահել, երբ բացվել է որմնանկարի մի հատվածը, որի վրա նույնությամբ կատարվել են ներկայիս նկարազարդումները։ Ավելին տես Ա. ՊԱՊՈՅԱՆ, *Էջմիածնի Մայր տաճարի որմնանկարների վերականգնման ընթացքը, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների եւ նյութերի ժողովածու, Երեւան, 2019, էջ 280։ Գրախոսվող սույն պատկերագրքի՝ Մայր Տաճարի վերջին վերանորոգման ընթացքում ի հայտ եկած նորահայտ որմնանկարչական շերտերից արված լուսանկարները որպես սկզբնաղբյուր գալիս են օժանդակելու նոր տեսանկյունից դիտարկելու եւ ամբողջականացնելու նախկինում ուսումնասիրված աշխատությունները։*

վայրը[6]։ Չնայած որոշ առարկաների դեպքում այն նշված է, սակայն խրախուսելի կլիներ նմանօրինակ մոտեցման կիրառումը մյուս բացատրագրերի կազմման ժամանակ եւս։

Չնայած պատկերագրքի վերջում ներկայացված են լուսանկարիչների անունները, սակայն անհրաժեշտ ենք համարում, որ ինչպես վաղ շրջանում, այնպես էլ մեր օրերում արված լուսանկարների հեղինակների անունները հիշատակվեն բացատրագրերում[7]։

Պետք է արձանագրել, որ Մայր տաճարին նվիրված յուրաքանչյուր աշխատություն հնարավորինս շատ մասնագետների կողմից ուսումնասիրելը անհրաժեշտ հրամայական է։

Ասողիկ աբեղա Կարապետյանի հեղինակած՝ «Սուրբ Էջմիածին. Քրիստոնեական աշխարհի առաջին Տաճարը» պատկերագիրքն իր ամբողջականությամբ Գրիգոր Լուսավորիչ հայրապետի տեսիլքի համաձայն Քրիստոսի էջքով կառուցված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ դարեր շարունակ որպես հայ ժողովրդի հոգեւոր հավերժության եւ ազգային համերաշխության քարեղեն եւ ոգեղեն հիմնասյան վավերագրման առհավատչյան է։

ԻՎԵԹ ԹԱՋԱՐՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու, ՄՄ

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Սուրբ Էջմիածին, Մայր Տաճար, Ասողիկ աբեղա Կարապետյան, պատկերագիրք, հոգեւոր ժառանգություն, վերանորոգում, վերաօծում,

---

[6] Արվեստաբան Հրավարդ Հակոբյանը հայկական մանրանկարչությանը նվիրված իր հեղինակած պատկերագրքում ներկայացրել է տարբեր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերի մանրանկարներ։ Յուրաքանչյուր ձեռագրի բացատրագրում նա ներկայացրել է ձեռագրի պահպանման վայրի (արտերկրում հայկական ձեռագրական կենտրոններ, պետական կամ մասնավոր հավաքածուներ) մասին։ Կարծում ենք՝ այս պատկերագրքի կազմման դեպքում նույնպես անհրաժեշտ էր այդ սկզբունքով առաջնորդվել։ Տե՛ս Հ. Հակոբյան, Հայկական մանրանկարչություն, Երեւան, 2019։

[7] Բոլոր ժամանակներում արված լուսանկարների հեղինակների տվյալները առաջին հերթին կարեւոր են լուսանկարչության պատմությունն ուսումնասիրող մասնագետների համար, իսկ լուսանկարի բովանդակությունից կախված՝ նաեւ մի շարք այլ բնագավառներ ուսումնասիրողների համար։ Նման մոտեցում է կիրառվել հետեւյալ պատկերագրքում՝ Ի. Թաջարյան, Լուսանկարների ընտրանի Մաշտոցի անվան Մատենադարանի հավաքածուներից (գիրք Ա.) Երեւան, 2023։

հայ եկեղեցական արվեստ, արխիվային լուսանկարներ, քրիստոնեական առաջին տաճար:

РЕЗЮМЕ

В статье рассматривается иллюстрированное издание архимандрита (вардапета) Асогика Карапетяна «Святой Эчмиадзин. Первый храм христианского мира», посвящённое восстановлению и повторному освящению Первопрестольного собора Святого Эчмиадзина. Анализируются структура труда, принципы отбора визуального материала и использование архивных и фотографических источников. Подчёркивается значение издания для исследований в области истории, богословия и искусствознания.

SUMMARY

This article reviews the illustrated volume “Holy Etchmiadzin: The First Church of the Christian World” by Archimandrite Asoghik Karapetyan, dedicated to the restoration and re-consecration of the Cathedral of Holy Etchmiadzin. It examines the structure of the work, the selection of visual material, and the use of archival and photographic sources, highlighting the publication’s scholarly value for studies in history, theology, and art history.